



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 79-Ա
20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ
ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ» ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
«ԿՈՄՈՒՆԱԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ» ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշումների, հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 106 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով, *համայնքի ավագանին n p n 2 ու մ է.*

1. Կապան համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություններ և համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք առանձին հողամասերը (համաձայն հավելված N 1-ի, ընդհանուր մակերեսը 3.16386 հա,) փոխադրել «Էներգետիկայի,

տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» նպատակային նշանակության «կոմունալ օբյեկտների հողերի» գործառնական նշանակության հողերի:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)

ԲԱԴԱԼՅԱՆ ԱԻԴԱ

ՎԱԿՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Ձեռնպահ (1)

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ դեկտեմբերի 20
ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 80-Ն

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18)-րդ և 19)-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման VII մասի 49-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով, համայնքի ավագանին ***n p n շ ու մ է.***

1. 2017 թվականի համար Կապան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև

200 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝

15000 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

քա. 201-ից մինչև 500 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

30000 դրամ,

քր. 501-ից մինչև 1000 քառ. մետր ընդհանուր

մակերես ունեցող օբյեկտների համար՝

50000 դրամ,

բգ. 1001-ից մինչև 3000 քառ. մետր ընդհանուր

մակերես ունեցող օբյեկտների համար՝

50000 դրամ,

բդ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր

մակերես ունեցող օբյեկտների համար

100000 դրամ,

ոչ հիմնական շինությունների փեղադրման համար՝

գ. մինչև 20 քառ. մետր ընդհանուր մակերես

ունեցող օբյեկտների համար՝

3000 դրամ,

դ. 20 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես

ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ:

2) Շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների,

շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների

/այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն՝

3000 դրամ,

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 2) ենթակետի ա. պարբերությամբ սահմանված դրույքաչափերի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1)–ին ենթակետով սահմանված դրույքաչափերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1)–ին ենթակետով սահմանված դրույքաչափերը:

3) Շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների

քանդման թույլտվություն՝

5000 դրամ,

4) համայնքի տարածքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

10000 դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

12000 դրամ,

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

14000 դրամ,

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **21000 դրամ,**

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **26000 դրամ,**

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **46000 դրամ:**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 դրամ,**

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000 դրամ,**

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **14000 դրամ,**

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **21000 դրամ,**

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **26000 դրամ,**

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **46000 դրամ:**

5) ա. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար **200 դրամ,**

բ. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է

-հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 դրամ,**

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000 դրամ,**

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10500 դրամ,**

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **16000 դրամ,**

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **21000 դրամ,**

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **31000 դրամ:**

-ոչ հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 դրամ,**

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 դրամ,**

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես հանրային սննդի օբյեկտի համար՝

4000 դրամ,

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

6000 դրամ,

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

10000 դրամ,

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

16000 դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝

25000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝

80000 դրամ,

գ. բաղնիքների /սաունաների/ համար՝

200000 դրամ,

դ. խաղատների կազմակերպման համար՝

500000 դրամ,

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝

250000 դրամ,

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝

100000 դրամ

7) Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

0 դրամ:

8) Կապան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը յուրաքանչյուր ամսվա համար սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև

20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող

արտաքին գովազդի համար՝

1700 դրամ,

բ. թունդ ալկահոլային /սպիրտի պարունակությունը

20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք

գովազդող արտաքին գովազդի համար՝

3200 դրամ,

գ. այլ արտաքին գովազդի համար՝

1200 դրամ,

դ. մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝

ծխախոտի արտաքին գովազդի համար՝

3200 դրամ,

ե. սոցիալական գովազդի համար՝

0 դրամ

զ. համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց՝

300 դրամ,

է. արտաքին գովազդ տարածող գովազդակրի՝ իր կազմակերպության գովազդը տեղաբաշխելու և տարածելու համար մեկ քառակուսի մետրի դիմաց՝

120 դրամ

9) Կապան համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ

և կրկնօրինակներ տրամադրելու համար՝

1000 դրամ,

10) Հայաստանի Հանրապետության համայնքների

անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու

թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ

տարվա համար՝

50000 դրամ,

11) Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝

10000 դրամ,

12) Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝

50000 դրամ

13) Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա համար՝

50000 դրամ

14) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝

175000 դրամ,

15) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ 30000 դրամ,

16) Մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ,

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ,

գ) 7 հա-ից մինչև 10 մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ,

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

2. Կապան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

5000 դրամ,

2) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և օգտագործման տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց՝

5000 դրամ,

3) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական

վճարը սահմանվում է՝
յուրաքանչյուր մասնակցից՝
յուրաքանչյուր դիտորդից՝

5000 դրամ
500 դրամ,

4) Համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի
հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝

2000 դրամ

5) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի
աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության
ակտերի պետական գրանցումները կատարելու դեպքում
տեղական վճար՝

10000 դրամ:

3. 2017 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Կապան քաղաքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» թիվ 82-Ն որոշումը:

Կողմ (10)՝

ԲԱԴԱԼՅԱՆ ԱԻԴԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Ձեռնպահ (1)

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԵՐՆԱԿԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 20
ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 81-Ն

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 97-Ն

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3)-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով, *համայնքի ավագանին որոշում է.*

Կապան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Կապան քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 97-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ և հաստատել հավելվածների աղյուսակների հետևյալ ցուցանիշները՝

1) Որոշման 2-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի եկամուտները» թիվ 1 հավելվածում, համաձայն հավելված 1-ի:

2) Որոշման 3-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման» թիվ 2 հավելվածում, համաձայն հավելված 2-ի:

4) Որոշման 7-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման» թիվ 6 հավելվածում, համաձայն հավելված 4-ի:

 ԲԱԴԱԼՅԱՆ ԱԻԴԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՀԱԿՈՒՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Ձեռնպահ (1)


ՆԱԲՏԻՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԿՐԱՅԻՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 20
 ք. Կապան





Հավելված N 1
Կապան քաղաքային համայնքի ավագանու
20.12.2016թ. թիվ 81 -Ն որոշման

Կապան քաղաքային համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 21-ի թիվ 97-Ն որոշման թիվ 1
հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող		-416,00	-416,00	0,00
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	189,00	189,00	X
	այդ թվում՝				
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	189,00	189,00	X
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրք (տող1132+տող1135+տող1136+տող1137+տող1138+տող1139+ տող1140+տող1141+տող1142+տող1143+տող1144+տող1145+տող1146+տող1147+տող1148+տող1149+տող1150+տող1151+տող1152+տող1153+տող1154+տող1155+տող1156+տող1157+տող1158+տող1159+տող1160+տող1161+տող1162+տող1163+տող1164+տող1165+տող1166+տող1167+տող1168+տող1169+տող1170+տող1171+տող1172+տող1173+տող1174+տող1175+տող1176+տող1177+տող1178+տող1179+տող1180+տող1181+տող1182+տող1183+տող1184+տող1185+տող1186+տող1187+տող1188+տող1189+տող1190+տող1191+տող1192+տող1193+տող1194+տող1195+տող1196+տող1197+տող1198+տող1199+տող1200)	71452	189,00	189,00	X
	այդ թվում՝				
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334),		437,00	437,00	X
	որից՝				
1133	աա) Հիմնական շինությունների համար		420,0	420,0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		17,0	17,0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության		-358,8	-358,8	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		50,0	50,0	X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		175,0	175,0	X

1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		-100,0	-100,0	X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		50,0	50,0	X
1147	ժդ) Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն		-64,2	-64,2	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	-605,00	-605,00	0,00
	այդ թվում՝				
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	-1225,00	-1225,00	X
	այդ թվում՝				
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		-1225,0	-1225,0	X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	520,00	520,00	X
	այդ թվում՝				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		520,0	520,0	X
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7441	-3000,0	-3000,0	X
	(տող 1371 + տող 1372)				
	այդ թվում՝				
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին		-3000,0	-3000,0	X
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	3100,00	3100,00	
	այդ թվում՝				
1393ա	Աղբահանության վճար		100,0	100,0	
1393բ	Այլ ոչ հարկային եկամուտ		3000,0	3000,0	

Աշխատակազմի քարտուղար՝  Ն. Շահնագարյան



Հավելված N 2

Կապան քաղաքային համայնքի ավագանու


20.12.2016թ. թիվ 81-Ն որոշման

Կապան քաղաքային համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 21-ի թիվ 97-Ն որոշման թիվ 2
հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

Տող ի NN	Բա- ժին	Խու- մբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/	
						վարչական մաս	Ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2400+տող2500+տող2600+տող2800+տող2900+տող3000+տող3100)	-416,00	-416,0	
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2950+տող2980)	-416,00	-416,0	
				այդ թվում՝			
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	-416,00	-416,0	
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	-416,00	-416,00	

Աշխատակազմի քարտուղար՝  Շահնազարյան



Հավելված N 3
Կապան քաղաքային համայնքի ավագանու
20.12.2016թ. թիվ 81-Ն որոշման

Կապան քաղաքային համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 21-ի թիվ 97-Ն որոշման թիվ 2
հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)


Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-416,0	-416,0	
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝	x	-416,0	-416,0	
4400	1.4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ (տող4410+տող4420)	x	-416,0	-416,0	
	այդ թվում՝				
4410	ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4411+տող4412)	x	-416,0	-416,0	
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	-416,0	-416,0	


Աշխատակազմի քարտուղար *[Signature]* Ն. Շահնազարյան

Կապան քաղաքային համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 21-ի թիվ 97-Ն որոշման թիվ 6
հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

Տողի NN	Քաղին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-416,0	-416,0	
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2950)	-416,0	-416,0	
				այդ թվում՝			
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	-416,0	-416,0	
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն /ՀՈԱԿ/	-416,0	-416,0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի			
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-416,0	-416,0	
				Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-416,0	-416,0	
				1.4 ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ	-416,0	-416,0	
				այդ թվում			
				ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ)ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	-416,0	-416,0	
				որից՝			
				-Սուբսիդիաներ պետական (համայնքային)կազմակերպություններին	-416,0	-416,0	

Աշխատակազմի քարտուղար՝  Ն. Շահնագարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 82-Ն

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 9 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ արդյունքներով, *համայնքի ավագանին նրռշում է.*

1. Հաստատել Կապան համայնքի 2017 թվականի բյուջեն՝

ա. եկամուտների գծով՝ 1275552,10 հազար դրամ.

բ. ծախսերի գծով՝ 1275552,10 հազար դրամ.:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն N 1 հավելվածի.

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի.

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեկերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/՝ համաձայն N 4 հավելվածի.

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն N 5 հավելվածի.

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 6 հավելվածի.

8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները.

9. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների.

բ) բյուջետային տարվա ընթացքում փոփոխությունները կատարել առանց սահմանափակումների.


10. Համայնքի 2017թ. բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը առաջնահերթ կարգով ուղղել նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը և ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:


11. 2017 թվականի բյուջեի եկամուտների գերակատարումը ուղղել հնգամյա ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացմանը:

Կողմ (9)՝

 ԲԱԴԱԼՅԱՆ ԱԻԴԱ


 ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

 ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՇԵ

 ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

 ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՐԵԿ

 ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ


 ՄԵԼԻՔՅԱՆ ՄՈՒՐԱԴ

 ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

 ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ


Դեմ (0)

Ձեռնպահ (2)

 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷԴԳԱՐ

 ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 ԱՐԽԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ դեկտեմբերի 20
ք. Կապան



ՍՅՈՒՆԻՔԻ

(մարզի անվանումը) **ՄԱՐԶԻ**

ԿԱՊԱՆ

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը) **ՀԱՄԱՅՆՔԻ**

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է _____
Կապան քաղաքային համայնքի
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)
ավագանու 2016 թվականի 20 դեկտեմբերի N82-Ն որոշմամբ:
(ամիս, ամսաթիվ)


ԿԱՊԱՆԻ

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական զանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



Հավելված 1
Կապան քաղաքային համայնքի ավագանու
<< 20>> դեկտեմբեր 2016թ. թիվ 82-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		1275552,10	1201577,10	73975,00
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	153257,00	153257,00	X
	(տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160)				
	այդ թվում՝				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	24500,00	24500,00	X
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		18700,0	18700,0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		5800,0	5800,0	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	96000,00	96000,00	X
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		96000,0	96000,0	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	24157,00	24157,00	X
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրք (տող1132+տող1135+տող1136+տող1137+տող1138+տող1139+տող1140+տող1141+տող1142+տող1143+տող1144+տող1145+տող1146)	71452	24157,00	24157,00	X
	այդ թվում՝				
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334),		486,00	486,00	X
	որից՝				
1133	աա) Հիմնական շինությունների համար		480,0	480,0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		6,0	6,0	X

1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		96,0	96,0	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		10,0	10,0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		12500,0	12500,0	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		200,0	200,0	X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		2355,0	2355,0	X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		100,0	100,0	X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		0,0	0,0	X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		6500,0	6500,0	X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0,0	0,0	X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0,0	0,0	x
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		650,0	650,0	X
1146	ժգ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		320,0	320,0	x
1147	ժդ) Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն		540,0	540,0	

1148	Ժե) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն		300,0	300,0	
1149	Ժզ) Համայնքի տարածքում քաղաքացիական հագեցման գոտի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվություն		100,0	100,0	
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	7146	8600,00	8600,00	X
	այդ թվում՝				
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր		8600,00	8600,00	X
	այդ թվում՝				
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		3300,0	3300,0	X
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		5300,0	5300,0	X
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ	7161	0	0	X
	այդ թվում՝				
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ		0	0	X
	(տող 1162 + տող 1163 + տող 1164)				
1162	ա) Եկամտահարկ		0	0	X
1163	բ) Շահութահարկ		0	0	X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	826818,40	817943,40	8875,0
	(տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)				
	այդ թվում՝				
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	817943,40	817943,40	X
	(տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258)				
	որից՝				
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		800605,6	800605,6	X
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0	0	X


	այդ թվում՝				
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ				X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ				X
1257	գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		17337,8	17337,8	X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7332	8875,0	X	8875,0
	(տող 1261 + տող 1262)				
	այդ թվում՝				
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		8875,0	X	8875,0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	295476,70	230376,70	65100,0
	(տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390)				
	այդ թվում՝				
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	122340,00	122340,00	X
	(տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334)				
	այդ թվում՝				
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		86500,0	86500,0	X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		30000,0	30000,0	X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		5840,0	5840,0	X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	7306,70	7306,70	X
	(տող 1341 + տող 1342+ տող 1343)				
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		7306,7	7306,7	X
1350	3.5 Վարչական գանձումներ	7422	4570,00	4570,00	X
	(տող 1351 + տող 1352)				
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ(տող 1351ա+տող 1351բ) այդ թվում				X

1351ա	Համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		60,0	60,0	
1351բ	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար		550,0	550,0	
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		3960,0	3960,0	X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	5000,00	5000,00	X
	այդ թվում՝				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		5000,0	5000,0	X
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7441	91000,0	91000,0	X
	այդ թվում՝				
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		91000,0	91000,0	X
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7442	65100,0		65100,0
	(տող 1381 + տող 1382)				
	այդ թվում՝				
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե		65100,0	X	65100,0
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	160,00	160,00	
	(տող 1391 + տող 1392 + տող 1393)				
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր			X	
1393ա	Աղբահանության վճար				
1393բ	Այլ ոչ հարկային եկամուտ		160,0	160,0	

Աշխատակազմի քարտուղար

Լ. Զեյնալ

Ներքին Շահանազարյան



Հավելված 2
Կապան քաղաքային համայնքի անկազանու
<< 20>> դեկտեմբեր 2016թ. թիվ 82 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ


(հազար դրամներով)

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2400+տող2500+տող2600+տող2800+տող 2900+տող3000+տող3100)	1275552,10	1201577,10	73975,00
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2130+տող2160)	202316,4	201316,4	1000,00
				այդ թվում՝			
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջեային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	156331,80	155331,8	1000,00
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	156331,80	155331,8	1000,0
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ	42984,60	42984,60	0
				որից՝			
2133	01	3	1	Ընդհանուր բնույթի ծառայություններ՝ /ՔԿԱԳ/	7306,7	7306,7	0
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	35677,9	35677,9	
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	3000,0	3000,0	0
				որից՝			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	3000,0	3000,0	0
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2450+տող2490)	2200,00	200,00	2000,00
				այդ թվում՝			
2410	04	1	0	Ընդհանուր բնույթի փոխհատկության, առևտրային և	100,0	100,0	
				որից՝			
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային	100,0	100,0	
2450	04	5	0	Տրանսպորտ	9100,0	100,0	9000,0
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	3000,0		3000,0
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	6100,0	100,0	6000,0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-7000		-7000,0
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-7000,0		-7000,0

2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2510+տող2530+տող2560)	212321,9	183446,9	28875,0
				այդ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	191946,9	171946,9	20000,0
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	191946,9	171946,9	20000,0
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	500,0	500,0	
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	500,0	500,0	
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)/Կանաչապատում/	19875,0	11000,0	8875,0
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	19875,0	11000,0	8875,0
